Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2019 թվականի նոյեմբերի 28-ի N 14 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

1. Ներածություն _____ 3

2. Ծրագրի նպատակները _____ 4

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները _____ 8

4. Իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը _____ 9

5. Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը _____ 11

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 732-Լ որոշման 2-րդ կետով հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությամբ և համաձայն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա մարմին:

Տեսչական մարմինը իրականացնում է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն՝ ապահովելով վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների կանխարգելումը, այդ թվում՝ անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

Տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N732-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ նորմատիվ իրավական ակտեր:

Սույն ծրագիրը հաստատվում է <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Տեսչական մարմնի կառավարման խորհուրդի կողմից՝ Տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

2. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է՝ ոչ պարենային արտադրանքի անվտանգության, ինչպես նաև չափագիտական կանոնների և նորմերի կատարման ապահովումը, խախտումների բացահայտումը, կանխարգելումն ու վերացումը, մասնավորապես Տեսչական մարմինը սույն ծրագիրը կազմելիս թիրախավորել է հետևյալ ոլորտները՝

1. ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ),
2. ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
3. հեղուկացված ածխաջրածնային գազեր,
4. չափումների միասնականության ապահովում,
5. խաղալիքներ,
6. երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,

ԱԳԼՃԿ-ների ոլորտում իրականացված ստուգումների արդյունքներից ակնհայտ է, որ ԱԳԼՃԿ-ներում թույլ տրված հիմնական խախտումներիից է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի N 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 87-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի չկատարումը, այն է՝ բնական գազի կոմպրեսացված վառելիքի լիցքավորման բաշխիչ աշտարակը պետք է սահմանափակի լիցքավորվող գազի ճնշումը՝ մինչև 19,6 ՄՊա:

Տեսչական մարմինը ԱԳԼՃԿ-ներում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ճնշումը մինչև 19,6 ՄՊա սահմանափակելու նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացրել առաջարկություն փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ կատարած խախտումների համար սահմանելով համաչափ տուգանքների չափեր (ներկայումս նախատեսված է

տուգանք՝ 50 հազ. – 100 հազ. դրամ): Տուգանքների չափերի բարձրացումը կզսպի սահմանված ճնշումից ավելի բարձր ճնշմամբ գազի լիցքավորումը:

2020 թվականի ընթացքում նախատեսված է ստուգումներ իրականացնել ԱԳԼՃԿ շահագործող թվով 47 տնտեսվարող սուբյեկտի մոտ՝ նվազացնելով խախտումների տեսակարար կշիռը առնվազն 10%-ով:

Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի ոլորտում առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վառելիքի անվտանգության ցուցանիշներով և թերլցումներով: 2019 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացնել ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք իրացնող թվով 23 տնտեսվարող սուբյեկտի մոտ և վերցվել է թվով 35 ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի փորձանմուշ: Լաբորատոր փորձարկման արդյունքում փորձանմուշների 51.4%-ի մոտ հայտնաբերվել են ծծմբի զանգվածային մասի, ածխաջրածինների ծավալային մասի և օկտանային թվի անհամապատասխանություններ:

Այդ ռիսկերի նվազեցման նպատակով Տեսչական մարմինը շարունակելու է այդ ոլորտում իրականացվող խիստ վերահսկողությունը և նախատեսում է 2020 թվականի ընթացքում ստուգումներ իրականացնել բենզալցակայան շահագործող ևս 21 տնտեսվարող սուբյեկտների մոտ՝ նպատակադրվելով խախտումների տեսակարար կշիռը նվազեցնել 9-11%-ով:

Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերի նկատմաբ վերահսկողությունը Տեսչական մարմնին վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 686-Ն որոշմամբ: Տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնելու

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի օգոստոսի 9-ի N 68 որոշմամբ հաստատված «Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջներ» (ԵԱՏՄ ՏԿ 036/2016) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ:

Այս ոլորտում առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վառելիքի անվտանգության ցուցանիշներով և թերլցումներով: Առկա ռիսկերը մեղմելու նպատակով 2020 թվականի ընթացքում նախատեսված է ստուգումներ իրականացնել հեղուկ գազ վաճառող թվով 22 տնտեսվարող սուբյեկտի մոտ:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վերը թվարկված երկու ոլորտներում (ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի, հեղուկացված ածխաջրածնային գազերի) չափագիտական կանոնների և նորմերի խախտմամբ: Այս ռիսկը պայմանավորված է չափագիտական կանոնների և նորմերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս նախապես երեք աշխատանքային օր առաջ տնտեսվարող սուբյեկտին տեղեկացնելու պահանջով (հիմք՝ <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենք), քանի որ տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն են ունենում եռօրյա ժամկետում չափման միջոցի օգտագործումը քողարկել, ստուգման ժամանակահատվածում թերությունները վերացնել և ներկայացնել թվացյալ այլ իրավիճակ:

Տեսչական մարմնի առաջարկությամբ՝ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ մշակվել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների

կազմակերպման և անցկացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որն ընդունվել է:

Սույն օրենքի ընդունման արդյունքում Տեսչական մարմնի կողմից այս ոլորտում իրականացվող ստուգումները կիրականացվեն առանց նախապես տեղեկացնելու, ինչն իր դրական ազդեցությունը կթողնի այդ ոլորտներում (և ոչ միայն) չափագիտական կանոնների և նորմերի բացահայտման և խախտումների շտկման վրա:

Խաղալիքների, երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի ոլորտներում առկա ռիսկերը պայմանավորված են առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի և հայերեն մակնշման արտադրանքի իրացմամբ: Նշված ոլորտներում բացահայտված խախտումների առնվազն 80%-ը վերաբերում են երրորդ երկրներից (Չինաստան, Թուրքիա, Իրան, ԱՄԷ, Լիբանան, Մեքսիկա, Հնդկաստան, Ուկրաինա, Ռումինիա, Սլովակիա և այլն) ներմուծված արտադրանքներին, ինչը հաշվի առնելով Տեսչական մարմինը նախատեսում է 2020 թվականի ընթացքում ստուգումներ իրականացնել վերը նշված ոլորտներում գործունեություն իրականացնող թվով 128 տնտեսվարող սուբյեկտի մոտ՝ նվազագույնի հասցնելով վտանգավոր արտադրանքի առկայությունը շուկայում (խախտումների տեսակարար կշիռը նվազեցնել 8-10%-ով):

Տեսչական մարմնը 2020 թվականի ստուգումների ծրագիրը կազմելիս նաև թիրախավորել է այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք Տեսչական մարմնի վերահսկման ենթակա միաժամանակ մի քանի ոլորտի արտադրանք են իրացնում:

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

1. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ տարածք ներմուծվող և վաճառվող ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ,
2. <<Չափագիտության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ից՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ստուգաչափված և չստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ,
3. Երևան քաղաքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալներ,
4. ՀՀ-ում գործող ԱԳԼՃԿ-ներում իրականացված իրազեկման աշխատանքների արդյունքում ձեռք բերված տեղեկատվություն,
5. Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքից՝ տրամադրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի վերաբերյալ:
6. Եվրասիական տնտեսական միության պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրից՝ արտադրանքների պետական գրանցման վերաբերյալ:
7. Ստացված դիմում-բողոքների և հեռախոսազանգի միջոցով,
8. ՁԼՄ-ներից և համացանցից՝ իրականացված ուսումնասիրությունների միջոցով:

4. Իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր 250 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացնել ստուգում, որից

1-ին եռամսյակում՝ 53,

2-րդ եռամսյակում՝ 78,

3-րդ եռամսյակում՝ 67,

4-րդ եռամսյակում՝ 52:

Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացվել է ծրագրով նախատեսված 238 ստուգում և դիմում-բողոքի հիման վրա՝ 30-ը: Ծրագրով նախատեսված 12 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգում չի իրականացվել պայմանավորված հետևյալ պատճառներով՝

- 9 տնտեսվարող սուբյեկտ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է,
- 3 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգում իրականացնելու մասին հրաման ճանաչվել է չեղյալ:

Առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված (այդ թվում նաև ԵԱՏՄ-ից) ոչ պարենային արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքում տեղադրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում զետեղված տվյալների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի ընթացքում պարբերաբար և խոշոր ծավալի ոչ պարենային արտադրանք ներմուծող տնտեսվարող սուբյեկտների ընդամենը 32.8%-ն է իր կողմից ներմուծած

արտադրանքը ենթարկել համապատասխանության գնահատման, իսկ 2019 թվականի ինը ամսվա կտրվածքով՝ շուրջ 35,9%-ը: Ելնելով վերը շարադրվածից ակնհայտ է, որ գրանցվել է համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի աճ՝ 3.1%-ով, ինչը վկայում է ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի շուկայում անվտանգության ցուցանիշների աճի մասին:

Ստուգման արդյունքներով 2019 թվականի ընթացքում նշանակված տուգանքների գումարը կազմել է 29.025,0 հազար ՀՀ դրամ, որից պետական բյուջե արդեն իսկ վճարվել է 20.490,0 հազար ՀՀ դրամ՝ գանձելության ցուցանիշը կազմելով 70,5%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում 72.0% տնտեսվարող սուբյեկտների (193 տնտեսվարող) մոտ հայտնաբերվել են տարբեր բնույթի (համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափագիտական նորմերի և այլ) խախտումներ: Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման համար տնտեսվարող սուբյեկետները 2019 թվականի ընթացքում դիմել և համապատասխան մարմիններից ստացել են՝

- թվով 187 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր,
- թվով 404 չափման միջոց ենթարկվել է ստուգաչափման:

Տեսչական մարմնի կողմից 2019թ. իրականացրած ստուգումների ընթացքում նույն ոլորտում 18 և ավել կիրառված ստուգաթերթերի արդյունքում հայտնաբերված խախտումների տեսակարար կշռի պատկերը ընդհանուր թվաքանակի նկատմամբ ըստ ոլորտների հետևյալն է՝

- տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն (տեսակարար կշիռը 86%),
- ցածրավոլտ սարքավորումներ (տեսակարար կշիռը 81%),
- խաղալիք (տեսակարար կշիռը 76%),
- օծանելիքակոսմետիկական արտադրանք (տեսակարար կշիռը 44%),
- երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք (տեսակարար կշիռը 42%),
- ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք (տեսակարար կշիռը 41%),
- ԱԳԼՃԿ (տեսակարար կշիռը 39%),
- կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ (տեսակարար կշիռը 37%):

Տեսչական մարմինը իր 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս հաշվի է առել նաև վերը նշվածը պատկերը:

Տեսչական մարմնի կողմից կարգավորվող ոլորտներում առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով իրականացվում է հավաքագրված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տվյալների վերլուծություն: Մասնավորապես իրականացվել է. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն՝ վերհանելով պարբերաբար և մեծ ծավալի ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտները

5. Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը

2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 22 ոլորտի 350 տնտեսվարող սուբյեկտ (2019թ.-ի նկատմամբ 40% աճ):

Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակում՝ 83,

2-րդ եռամսյակում՝ 103,

3-րդ եռամսյակում՝ 92

4-րդ եռամսյակում՝ 72:

Ծրագրով նախատեսվում է 2020 թվականին իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- **համապատասխանության գնահատման ոլորտում** իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 6-8% աճ,
- **չափագիտության ոլորտում** չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացմամբ ապահովել ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 5-7% աճ,
- **մակնշման ոլորտում** սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում առնվազն 5-7%-ով,
- **թանկարժեք մետաղների ոլորտում** հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց կողմից ծավալած գործունեության նկատմամբ վերահսկողական լծակների արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ ձեռնարկել թանկարժեք մետաղների անալիզատոր

ձեռք բերելու ուղղությամբ, ինչը կնվազեցի հավանականությունը նշված հարգից ցածր հարգի թանկարժեք մետաղից պատրաստած իրերի վաճառքը,

- **<u>ռիսկերի գնահատում՝</u>** Տեսչական մարմնի կողմից 2020թ. ընթացքում Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ռիսկերի կառավարում,
- **<u>Տեսչական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում</u>** առկա խնդիրների բացահայտում և համապատասխան միջոցառումների ներկայացում, մասնավորապես մշակել՝

- <<Ոչ պարենային արտադրանքի անվտանգության մասին>> և <<Շուկայի վերահսկողության մասին>> ՀՀ օրենքների նախագծերը,
- համապատասխանության գնահատման ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ստուգաթերթը (հիմք՝ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1071-Ա որոշում):

- **<u>կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ</u>** (ծրագիրը ներկայացված է 2-րդ հավելվածով),
- **<u>անձնակազմի կարողությունների զարգացում</u>՝** համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ՝ առնվազն մեկ դասընթացի կազմակերպում,
- **<u>դիմում-բողոքներին արձագանքում, խորհրդատվության տրամադրում:</u>**

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2020 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են հավելված 1-ով:

Հավելված 1

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը/գնահատման չափանիշը	Կատարողը	Համակատարը	Ժամկետը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 83 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	I եռամսյակ
		թվով 102 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 92 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 73 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ
2.	Համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացում, շուկայի ուսումնասիրություն և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 6-8% աճ,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
3.	Չափագիտության ոլորտում չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացում և վերահսկողական գործիքակազմի կիրառում	Ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 5-7% աճ,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
4.	Մակնշման ոլորտում սպառողների իրազեկման մակարդակի բարձրացում, շուկայի ուսումնասիրություն և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում առնվազն 5-7%-ով,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն -	Տարվա ընթացքում
5.	ԱԳԼՃԿ-ներում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ճնշումը մինչև 19,6 ՄՊա սահմանափակելու նպատակով առաջարկում ենք	Վաճառվող բարձր ճնշման գազի առավելագույն ճնշման չափի սահմանափակում՝ 19.6ՄՊա-ից ոչ ավելի,	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,	-	I կիսամյակ

	փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ կատարած խախտումների համար սահմանելով համաչափ տուգանքներ: ԱԳԼՃԿ-ների ոլորտում թվով 47 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգումների իրականացում:	ստուգաչափված չափման միջոցների շահագործում:	2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն, 3. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,		
6.	Ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում թվով 21 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների իրականացում, ինչը կուղեկցվի վառելիքի փորձանմուշների ձեռքբերմամբ և լաբորատոր փորձաքննության իրականացմամբ	Անվտանգության ցուցանիշների (ծծմբի զանգվածային մաս, ածխաջրածինների ծավալային մաս, օկտանային թիվ) բարելավում, ստուգաչափված չափման միջոցների շահագործում:	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,	Տարվա ընթացքում
7.	Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերի ոլորտում թվով 22 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների իրականացում, ինչը կուղեկցվի վառելիքի փորձանմուշների ձեռքբերմամբ և լաբորատոր փորձաքննության իրականացմամբ	Անվտանգության ցուցանիշների բարելավում, ստուգաչափված չափման միջոցների շահագործում:	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,	Տարվա ընթացքում
8.	Չափագիտության ոլորտում անակնկալ վերահսկողության իրականացում՝ առանց 3 աշխատանքային օր առաջ տեղեկացնելու, չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացում, վերահսկողական գործառույթի իրականացում	Ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 6-8% աճ,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն -	Տարվա ընթացքում
9.	Խաղալիքների, ինչպես նաև երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի ոլորտներում թվով 128 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների իրականացում, որոնք ներմուծվում են	Ոչ պարենային արտադրանքի շուկայահանում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ուղեկցությամբ և հայերեն մակնշմամբ	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,	Տարվա ընթացքում

	երրորդ երկրներից				
10.	Թանկարժեք մետաղների ոլորտում հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացում	Գործունեության համապատասխանեցում տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրությանը	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	Տարվա ընթացքում
11.	Առաջարկում ենք մշակել <<Ոչ պարենային արտադրանքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի նախագիծը	Կարգավորել Հայաստանի Հանրապետությունում ոչ պարենային արտադրանքի անվտանգությանն առնչվող հարաբերությունները	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	II կիսամյակ
12.	Առաջարկում ենք մշակել <<Շուկայի վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի նախագիծը	Կարգավորել Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, ինչպես նաև վերահսկողության հետ կապված այլ հարաբերությունները:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	II կիսամյակ
13.	Առաջարկում ենք մշակել համապատասխանության գնահատման ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ստուգաթերթը	Իրականացնել վերահսկողություն համապատասխանության գնահատման մարմինների նկատմամբ՝ բարձրացնելով վերջիններիսկողմից մատուցվող ծառայության մակարդակը	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն-	I կիսամյակ
14.	Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ռիսկերի կառավարում,	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու նպատակով հավաքագրումված տվյալների վերլուծություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
15.	Անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Կազմակերպել առնվազն մեկ դասընթաց՝ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Տարվա ընթացքում

Հավելված 2

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող
1.	Իրազեկում-հանդիպումներ Երևանում և մարզերում:	Տնտեսվարողների և քաղաքացիների՝ իրենց իրավունքների, պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
2.	Մամուլի հաղորդագրություն՝ տեսչական մարմնի ստուգումների արդյունքների և քաղաքացիներից ստացվող բողքների վերաբերյալ:	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարցրացում:	Տարվա ընթացքում	
3.	Տեսչական մարմնի ղեկավար անձանց հարցազրույցներ:	Տեսչական մարմնի ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության բարձրացում:	Տարվա ընթացքում	
4.	Տեսչական մարմնի լոգոյի մշակում:	Տեսչական մարմնի անհատականացում	Տարվա ընթացքում	
5.	Իրազեկման թերթիկների պատրաստում և տարածում	Սպառողների իրազեկման մակարդակի բարձրացում	Տարվա ընթացքում	
6.	«Թեժ գիծ» ծառայության սպասարկում	Սպառողների կողմից ստացվող ահազանգերի արագ արձագանքում	Տարվա ընթացքում	
7.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությանն առնչվող, նոր իրավական ակտեր ընդունվելու կամ դրանցում փոփոխություններ, լրացումներ կատարվելու մասին տնտեսվարողներին առցանց իրազեկում	Տնտեսվարողների՝ իրենց իրավունքների, պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում:	Տարվա ընթացքում	
8.	Հանդիպումներ հասարակական կազմակերպությունների հետ:	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում:	Տարվա ընթացքում	
9.	Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող մեդիա նյութերի հավաքագրում և վերլուծություն:	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի և ՀԼՄ-ների արձագանքների ամփոփում:	Տարվա ընթացքում	
10.	Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում:	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում:	Հուլիսի 20 2021թ-ի հունվարի 20	
11.	Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում	Թափանցիկության և իրազեկվածության բարձրացում:	Տարվա ընթացքում	